փոքր տեղին Հայոց · Թէպէտ զտան անդ ոմանք և 'ի Հայոց, և նորա բարւոք զննեալ 'ի նկատի էառ զամենայն տեղիս եկեղեցւոյն։

Եւ յաւուր տօնի Վարագայ Խաչի ('ի 25 Սեպտեմբերի) զկնի պատարագին Հայոց չոքաւ 'ի Ս. Յարութիւն, և շրջեալ ետես զամենայն զտեղիս և տեղեկացեալ գիտաց թէ որ տեղի որ ազգի սեփհական իցէ։ Թէպէտ ոմանք 'ի հակառակորդ այլազգեաց ազգ արարին նմա և թախանձանօք խնդրեցին իսկ փակել զդուռն Համբարձման և դնել զբանալին 'ի դատարան, այլ նա ոչ կամեցաւ · զայս բարիս միայն վայելեցին Հայք։ Եւ վասն այլ տեղեաց, յորոց վերայ վիճէին քրիստոնեայք, որպէս ծանուցին նմա ոմանք յայլազգեաց, բնաւ առարկայ ոչ երաց։ Հայք նախ քան զվճիռ նորին վասն Համբարձման, ցուցեալ էին նմա տեղեկագիր ինչ, որոց ասացեալ էր գրել գիր աղաչանաց առ ինքն և այնու խնդրել զգրեալսն · բայց Հայք ուշաբերեալ ոչ ինչ խնդրեցին 'ի նմանէ · մի դուցէ հանգիցէ խնդիրն 'ի կնճիռն անլուծանելի · Թէպէտ յետ վճռոյն մնաց ինքն 'ի քաղաքին աւուրս 15, և ապա մեկնեցաւ 'ի Պերութ ('ի 26 Սեպտեմբերի)։ Ի վերջոյ խմացան Հայք թէ այրն գրեաց յԻլամին կործանել զչինուածսն Համբարձման, յորոյ վերայ վշտացեալ սդային անվախթար, զի յուսմ պէտս վատնեցան այնքան քսակք դրամոց, և ինքեանք ակն ունէին կրել զամօթ առաջի աշխարհի։

Եւ եղեւ 'ի ժամանել Իլամին 'ի Կոստանդինուպոլիս, զոր գրեաց Շաթր Զատէ, տուաւ հրովարտակ յԱրքայէ ցԼատինս, զի կործանեսցին չինուածք Համբարձման տեղւոյն՝ ճանձրացեալ 'ի թախանձանաց Դեսպանին Գաղղիոյ և Ֆրանչիսկեան կրօնաւորաց, որոց ոչ սակաւ սատար եղեն նաեւ Յոյնք։ Փութով եհաս հրովարտակն յԵրուսաղէմ, ժողովեցան գլխաւորք այլազգեաց առ Քաղաքապետն Տիզդար Ահմէտ աղա, ուր էր եւ Դատաւորն, եկին անդ բազմութեամբ Լատինք և Յոյնք · և յետ ընթեռնլոյ ըզհրովարտակն, սահմանեցին զի անվթար կատարեսցի հրաման Արքային · ապա ելեալ անտի խուռն բազմութեամբ Լատինք և Յոյնք, եկեղեցականք, քրիստոնեայ ժողովուրդք և գիւղական Ֆելլահք գսրծի քանդման 'ի ձեռին դիմեցին